ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» դեկտեմբերի 2024 թվականի N **1244**

«ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.04.2023թ.-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Գրիգորյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ղազարյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքել են ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աղայան 1-ին և 2-րդ նրբանցքների, 409 Դիվիզիա նրբանցքի և Նելսոն Ստեփանյան փողոցների հիմնանորոգում տուֆե սալարկումով աշխատանքների կատարման գնման (ՀՀ-ԼՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/04) պայմանագիր, որի համաձայն՝ Կապալառուն ստանձնել է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աղայան 1-ին և 2-րդ նրբանցքների, 409 Դիվիզիա նրբանցքի և Նելսոն Ստեփանյան փողոցների հիմնանորոգում տուֆե սալարկումով աշխատանքների կատարման պարտավորությունը:

Կապալառուի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված թիվ 2-ով սահմանված օրացույցային գրաֆիկով և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2340-Ա որոշմամբ նախատեսված ժամկետները:

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ-ԼՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/04 ծածկագրով պայմանագրի 3.1.4-րդ և 8.11-րդ կետերի պահանջներով, 28.11.2024թ.-ին պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել է տեղեկագրում և նույն օրն այն ուղարկել մասնակցին:

«ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ին առաջարկվել է տասնօրյա ժամկետում տուժանքի ձևով, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված

որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 25723750 (Քսանհինգ միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ և 12991793 (Տասներկու միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ փոխանցել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի 900255101140 հաշվեհամարին:

«ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ի կողմից որակավորման և պայմանագրի ապահովումները չեն վճարվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. «ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել «ԴԻԱՄԱՆԹ» ՍՊԸ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի
09.12.2024թ. թիվ 1244 որոշման

	Անվանում	ՀՎՀՀ	Գործունեությանհասցե	Էլեկտրոնայինփոստիհասցե	Հեռախոսահամար
1	«ԴԻԱՄԱՆԹ»ՍՊԸ	01033022	ՀՀ Արագածոտնի մարզ, Ուջան բնակավայր, 2փ, տուն 24	aslantonoyan@mail.ru	+374 77 70-00-50